վճռեց գնալ Սպահան եւ այնտեղի Հայերի օգ-
նութեամբ աթոռը պարտքից ազատելու եւ նո-
րից կաթուղիկոսանալու հնարքը գտնել։ 1603
թուին նա մտաւ Սպահան, որտեղ Շահաբբասը
մեծ պատուով ընդունեց։ Մելքիսէթ եւ Դաւիթ
կաթուղիկոսները գիտէին, որ Շահաբբասը՝
Սպահան գաղթած քրիստոնեաների խորհրդով
կամենում է գալ նուաճել Հայաստանն եւ ա-
զատել Օսմանցւոց ձեռքից, ուստի մտածեցին
օգնել Շահաբբասի այդ դիտաւորութիւնն իրա-
գործելու։ Նրանք կարծում էին, որ մաքրելով
երկիրն Օսմանցիներից, իրենք եւս կ'ազատուին
պարտքից եւ դարձեալ կը վարեն կաթուղիկո-
սութիւնը։ Առաքել պատմագիրն անէծք է թա-
փում կաթուղիկոսների վրայ այդ երկնած խոր-
հրդի մասին. "Խորհեցան, ասէ, խորհուրդ եւ
ոչ Տերամբ, ըստ գրեցելումն, ի կորուստ անձանց
իւրեանց. կործանումն եւ ի տապալումն աշխար-
հին եւ ի ջնջումն ազգին իւրեանց"։ Ի հարկէ,
անարդարութիւն է՝ այդ կաթուղիկոսներին հա-
մարել միակ պատճառն ապագայ աղէտների, այլ
այս ստոյգ է, որ Մելքիսէթ կաթուղիկոսի Սպա-
հան գնալն եւ Շահաբբասին յորդորելը գալ
ազատել երկիրն Օսմանցւոց ձեռքից, արագացրեց
գործի լուծումը։ Շահաբբաս շարունակ մտա-
ծում էր քանդել Օսմանցւոց հետ արած իր հաշ-
տութիւնն եւ Ատրպատական ու Արարատեան
աշխարհն ազատել նրանց ձեռքից։ Այդ դի-
տաւորութիւնն իրագործելու համար նա յաջող
առթի էր սպասում. նրան հարկաւոր էր հաւ-